Արձանագրություն N 3

№060/GArm/26_5.4_032/06.02.26 ծածկագրով

Մրցակցային ընտրության հանձնաժողովի

ք. Երևան

25 փետրվար 2026թ.
Ժամը՝ 11:32

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Լալայան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մակարյան, Հ.Յումուշաղցյան, Տ.Հայրապետյան , Կ.Մինասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հակոբյան

1. Մրցակցային ընտրության հայտերի գնահատման նիստ

Հաշվի առնելով այն հանգամանքը որ «Մետադոր» ՍՊԸ -ի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն բավարարում մրցակցային ընտրության փաստաթղթերով սահմանված պահանջներին՝ մասնակիցը չունի նախկին երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված պայմանագիր, որի ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ մրցակցային ընտրության շրջանակներում ներկայացրած գնային առաջարկի 20%-ից, հանձնաժողովը որոշեց մերժել մասնակցի ներկայացրած հայտը:

«Դավ-Վահ» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, ունի համապատասխան տեխնիկական և աշխատանքային ռեսուրսներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովը որոշեց գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց անմիջապես հաստատել գնահատման արդյունքները.

«Դավ-Վահ» ՍՊԸ – բավարար

«Մետադոր» ՍՊԸ –անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գնումների մասին կարգի համաձայն, հանձնաժողովը որոշեց մրցակցային ընտրության ընտրված մասնակից ճանաչել «Դավ-Վահ» ՍՊԸ -ին՝ որպես բավարար գնահատված մրցակցային ընտրության հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Անգործության ժամկետը ավարտվելուց հետո ՝ Պատվիրատու՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ -ի , որը գտնվում է ք.Երևան Թբիլիսյան 43 հասցեում և Կապալառու ՝ «Դավ-Վահ» ՍՊԸ -ի, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Գ.Միքաելյան փող. 5/1 հասցեում, միջև կնքվելու է պայմանագիր 1378032798 ՀՀ դրամ ՝ ներառյալ ԱԱՀ արժեքով:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ – դեմ - 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի.** | | |
| **Նախագահ՝** | | Ա.Լալայան |
| **Անդամներ՝** | | Վ.Մակարյան |
| | | Տ.Հայրապետյան |
| | | Կ.Մինասյան |
| | | Հ. Յումուշաղցյան |
| **Քարտուղար՝** | | Ա. Հակոբյան |

## №060/GArm/26_5.4_032/06.02.26 ծածկագրով մրցակցային ընտրություն հայտի գնահատման թերթիկ 25.02.2026թ.

| | Մասնակցի հայտի գնահատման չափանիշները | Գնահատականը | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները* | |
|---|---|---|---|---|
| | | | Մասնակիցների անվանումները | |
| | | | «Դավ-Վահ» ՍՊԸ | «Մետադոր » ՍՊԸ |
| 1 | Հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին | Անբավարար<br>Բավարար | Բավարար | Բավարար |
| 2 | Բացված ծրարում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին | Անբավարար<br>Բավարար | Բավարար | Բավարար |
| 3 | Առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը հրավերով սահմանված նվազագույն պահանջներին | Անբավարար<br>Բավարար | Բավարար | |
| 4 | Ներկայացրած ֆինանսական ցուցանիշների՝ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը, հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը ու դրանց, ինչպես նաև ինքնարժեքի հաշվարկման թվաբանական ճշտությունը, մրցակցային ընտրության փաստաթղթերով սահմանված առավելագույն գնի գերազանցումը. | Անբավարար<br>Բավարար | Բավարար | |
| 5 | Ունի մասնագիտական գործունեության համապատասխանություն , մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ. | Անբավարար<br>Բավարար | Բավարար | |
| 6 | Նախորդ ժամանակահատվածում՝ տվյալ տարվա և դրան նախորդող 3 տարիների ընթացքում, կատարված նմանատիպ գործարքների ընդհանուր ծավալը՝ | Անբավարար<br>Բավարար | Բավարար | Անբավարար |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | Անբավարար<br>Բավարար | Բավարար | Անբավարար |

*Չափանիշներից որևէ մեկով «Անբավարար» գնահատականը ստացած լինելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է.

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի.** | | |
| **Նախագահ՝** | | Ա. Լալայան |
| **Անդամներ՝** | | Ա.Ռաֆյան |
| | | Տ. Հայրապետյան |
| | | Կ. Մինասյան |
| | | Հ.Յումուշաղջյան |